

## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

Ոչ մի կասկած չկայ, Մատեանի մէջ  
Ասունույն նկատմամբ արտայայտուած ուի քացացունքը, ինչպէս նաև փրկութեան  
հասնելու ճռնագարին ապրած երկուու-  
թիւնը իւրայատուկ կիրպով արտացոլում  
են ժամանակի պատմական ու հասարակա-  
կան իրադրութիւնը:

Պարզ է որ դրա ապացոյցն այն է:  
որ Նարեկացին շատ դէպքում էլ իր հա-  
գեկան նահանգուութիւնը արտայայտում  
է շատ բացայատ ձեռվ՝ ուղղակի իրական  
կեանքի հանգամանքների մէջ պատկերե-  
լով իրեն.

Թէ զինուոր եմ տեսնում՝ սպասում են  
մահաւան.

Թէ պազգամանոր՝ խսուրեան.

Թէ գրազի՞՝ կորսիսան մաւրիակի,

Թէ կրօնաւոր՝ անեծի ...

Թէ բարձրացած մի ձեռք կը կուսանան,  
Թէ խոտուիսկ փոքրիկ՝ կը սարսեն,՝  
Թէ լիե ը բնդիւն մի թերեւ՝ կ'ընդունեն,  
Թէ կ'նուխումք եռուեր սանան՝ կը  
դողան:

(Բան ԽԴ., Դ)

Եթէ անդամ մը խնճոյքի իրաւիր-  
ուելը Նարեկացուն (բանասեղծին) տան-  
ջալից վիճակի մէջ է զնում, այնչափ,  
որ ամէն տեղ նոտ հանդէպ իր անձին որ  
և է վտանգ է սպասում:

Նարեկացու պիենում շատ անգամներ  
և մէկը միւսից ծանր ճմկունչումներուն  
յիշատակութիւնից չի կարմիր բանա-  
տեղծի վերաբերեալ կենսագրական հզրա-  
կացութիւնների յանդել, զանազան ծանր  
յանցանքներ ասես, որ նու ուղղակիօրէն  
չի վերաբրում իրեն, նոյն ժամանակ այդ  
պատկերները ճշգրտուէն արտացոլում են  
Ֆեռալայանն իրականութեան բոլոր բա-  
ցասական կողմերը, գրանց նկատմամբ Նար-  
եկացու քննագատական - ժխտական կող-  
մերը և վերաբերմանքը, որը կնդիրուալ  
աշխատաւորական գանգուածների, նամա-  
նաւանդ գիւղացիական տրամադրութիւն-

ների արտայայտութիւնն էր: Նանրա-  
խորհուրդ սաերի և չարախօս քերանների  
գործած ամենածանր յանցանքների թւում  
շատ կարևոր է այն, ինչ որ կը վերա-  
բերուի ժամանակաշրջանի հասարակու-  
թան տարբեր խուհերի բարոյական դի-  
մանկարին: Այստեղ Նարեկացին աղոտո-  
րէն բացայայտում է տուել դիրքի կամ  
պաշտօնի մորդկանց բացասական գծերից  
ամենաէականնը՝ երանց պարտաւորութեան  
և իրական գարգագծի հակասութիւնը.

Անխունկ բահունայ ...

Նենգ խորհրդակից ...

Գծուուծ բարեկամ,

Գողամիտ հսկիչ ...

Պատօնեայ տրբեին,

Խորպախ զանձապես,

Բանաւորկու դեսպան ...

Նենց ատենապես,

Մատնիչ պահապան,

Զարախօս դրկից:

(Բան ԽԴ., Բ)

Նարեկացու պիեմի գեղարուեստական  
արժէքը տառջ պայմանաւորուած է ժա-  
մանակի իրականութեան խոր և ճշմար-  
ացի արտացոլմամբ:

Պակիմի քնարական հերոսը նոյնինքն  
գրիգոր Նարեկացին ատեղծուած է սրբէս  
նոյն այդ իրականութիւնը ներկայացնող  
մարդու մի հոյակապ ու համապարփակ  
կերպուր:

Այն, ինչը ամենից տառջ Նարեկա-  
ցուն գարձնում է նոր շրջանի սկզբնա-  
ւորող հոյ գրականութեան մէջ, դա  
մարդուն մասին անեցած նրա հայեացք-  
ներն և մարդկային ներքնաշխատնի շատ  
արտակարգ վերլուծութիւններն են:

Նարեկացին սիրում էր թէ՛ կեանքը  
և թէ՛ մարդուն: Նարեկացու մարդկու-  
թեան արտաների անխոնյ մերկացումների  
իմաստը մորդու ժխտումը չէ, այլ ամէն  
անսկէտից անթերի ու մաքուր, նաև  
ողբերգութեան հակասութիւններից ու տա-  
րկույսներից զիրծ մարդկային կերպարի  
կերտումը:

Նարեկացու ԱՄասեան Ողբերգութեան  
պիեմի մշատկան, մնայուն գեղարուեստա-

կան արժէքը, իր բովանդակութեան խռովութեան ու մհծութեան հետ, պայմանաւորուած է նաև հայ պահպանիման արաւեստի անսահման հարստութեամբ։ Անշուշտ Նարեկացու բանաստեղծական ու արտայայտական միջոցներն ու ձևերը անսպաս են, աներեակայելիօքն բազմագան ու գունդագեղ, իսկ բառարանը՝ հայ գրողներից ամենահարուստը։

Նարեկացու պահի բովանդակութեան զարգացման ինքնառպատճիւնը յայզերի ու արամագրութիւնների արտայայտման ու պատկերման համար միշտ էլ պահանջում է նորունոր և մեծ քանակութեամբ պահական հնարքներ ու միջոցներ։ Այլապէս կարող կը լինէր կրկնութիւնների տպուրութիւն առաջանալը։ Նարեկացին վատահօրէն ու խորպէս զիտակցի է իր ստեղծագործութեան էսէրթեան առանձնայակութիւններին և, համաձայն զրան, համապատասխան արտայայտական ձևերի անհրաժեշտութեանը։

Պոեմի մէջ մի աեղ, նա իրեն համար մեղքեր գործելուց շատ աւելի սղրալի բան է համարում կրկնութեան ստեղծմք շտափառութեան մէջ մտնելը։ Առհասարակ կարիք կայ նկատելու, որ Նարեկացին իր պոեմի ձևի ու բովանդակութեան հայկապ ներգաշնակութեանը հոսել է ոչ թէ առարերայնօրէն, այլ զեղարուսաւական ստեղծագործական առանձնայատակութիւնների՝ իր ժամանակաշրջանի համար արտակարգ ու աննախատիւպ լայն իմաստութեամբ ու զգացցութեամբ։

Կոսկած չունենք որ աշխարհի բոլոր մեծ բանաստեղծների նման Նարեկացին ինքը շատ հիմնալիօրէն գնահատել է իր ստեղծագործութեան գեղարուսաւական մեայուն արժէքը, երբ իր պոեմի յիշատակարանում դրել է, որ ինքը հրաշակերտել է բազմաստեղծնեան դրուագներով և միտոգոյ մի գիրք։

Նարեկացու Փ. գարում սկզբնաւորուած աշխարհականացման ոգին իր անմիջական փայլուն արտայատութիւնն է գտել նաև Նարեկացու պատկերաւորման արուեստի մէջ։ Նրա պոեմը չնշում է իյական աշխարհակ մէկտեղ, թէ՛ մարդկարան կեանքի իրագրութիւնները և թէ՛

բնութեան երեսյթները իրենց իրական ու ճշմարտացի նկարագրերով լիուլի օգտագործուած են բանաստեղծի կողմից իրեւ համեմատութիւններ ու փոխարերութիւններ ապրումների ու հոգեկիճնեկանների գեղարուսաւակուն մարմաւորման համար։ Բազմաթիւ ցայտաւուն օրինակներից մէկն է նաւարեկաւ թեան յուզիչ պատկերը։

Փոնդի միջնցու ևս անհող, անեւիքայ Մի վասնաւրեամբ արշաւում եի, Փեկուրեան միայի շնչին կասկածներ Մտացնելով այն փոքր միջոցի պատճառ ոով, որ զեր Բամանում էր ինձ իմ հանգրուանից, Կուծելով արդյուն հասնում եմ ափին, Զիերը յանձնուծ, ամսու ժամանակ, Բերբեր հովանով վրայ հանձնելով Եր եռալիկոծ դիմանարութեամբ Խակոյն վրդովեց նանդարտութիւնը։ Եւ այիների վայրազ բախսամից նաւր խորակուց։

(Ըստ ԽՍ., Բ.)

Նարեկացին իր շարունակութեան մէջ առամ է, թէ ինչպէս նաևսպահեա փրփշարութիւն ալիքների վրայ դրուած իր նաւի քեկորների նանդէպ արցաւնքի գետեր է հոսեցնում, նոյնպէս էլ ինքը (քանասեղծը) ողբում է իր հոգու խորտակումը։

Հասարակայնօրէն խուսափելով ալեզոցրիաներից ու զիմելով համեմատութիւնների ու փոխարերութիւնների Նարեկացին այդ պարուղույում էլ շատ է մտեցել նոր ժամանակների պոեզիայի ոգուն և առհասարակ դրունով նոր ճանապարհ է հարթել հայ քնարերգութիւն գալիք գարգարման համար։ Նարեկացու փոխարերութիւններն ու համեմատութիւնները, ինչպէս նաև ստեղծագործութիւնները, ու բունք պոեմում յորդում են հեղեղի նման, միշտ ինքնատիպ են ու հոմարձակ և գեղագիտական շատ բարձր ճաշակի ու զգացողութեան արտայայտութիւն։

Նարեկացու բանաստեղծական կուլտուրան շատ սերտօրէն կապուած է ժողովրդական բանահիւսութեան հետ, Այդպէս են ապացուցում նրա պոեմի համար այնքան բնորոշ երեակայական պատկեր-

ները, բանաստեղծական բազմապիսի արտասայշութիւնների կուտակումները և հակադրութիւնները, օրոնք այնքան անհրաժեշտ էին, խոհերի խորսութիւնն ու զգացմունքների ուժգնութիւնն արտայալակառ համար:

Նարեկացու ԱՄատեան Ողբերգութեանց պունի գեղարուեստական հրաշակերտ ամբողջութեան մէջ շատ մեծ նշանակութիւն ունի նաև համբաւառոր հնդինակի ուրոյն բառաստեղծման անսպաս կարողութիւնը, ժամանակի գրական լեզուն՝ զրաբարը ինչպիսի հարստութեան որ հասել էր պատմիքների, Կեդեցական գրոյների ու բանաստեղծների գործերում, չէր կարող Նորեկացու սահղագործական հրեակայութեան անսունման թռիչքը, իրերամերժ խոհերի ու զգացմունքների բոլոր նրբերանցները բարայացելի Նորեկացուց շատ առաջ բռն բանաստեղծութեան լիզուն շատ ու շատ աւելի աղքատ ու միակերպ էր, քան մեր պատմիչների լիզուն Եկեղեցական կարգերին հետևելը բացարձակութէում էր հոգեոր երգերի (շրաբականների) հեղինակներին լիզուական նորամենցութիւններ կատարել, և այդ այն աստիճան, որ նրանց լիզուական անհատականութիւնը համարեա թէ կորչում էր: Այս պարագայում վաստան կորոզ ենք ասել թէ Նորեկացին էր առաջինը, որ շատ ճոխ ու գունոտքել լիզուուի գրելու առաջնութիւնը նուռնեց պատմիչներից ու գերազանցից նրանց:

Նորեկացու ԱՄատեանցի լեզուն իրեկ գեղարուեստական լիզու, բացի այն՝ որ շատ հարսւատ է հաւաքածուներով, փոխարիւթիւններով և համեմատութիւնրով, ունի նաև ուրիշ հարեւոր արժանիքներ: Դրանցից առաջինը բարդ բառերով վերին աստիճանի հարսւատ լինելն է արտայայտում: Անշաւչ արտեստի տիսարանները բարդ բառերով հարսւատ լիզուն համարում են գեղարուեստական սակագործութիւններին յատուկ լիզու: Այս մի շատ նշանաւոր ճշմարտութիւն է, որը փայլուն կերպով ապացուցում է նաև Նորեկացու ստեղծագործութեան փորձով:

Նորեկացին բարդ բառերի ընտրութեան կամ նրանց սեփական կազմութեան

պարագայում, իր նախորդ գործերի հետ համեմտառծ՝ դէպի աւելի դրականն է գնացնել:

Նրա բարդ բառերը այնպիսի արտասովոր կազմուածք չունեն, ինչպէս որ շատ դէպքում Ցաղերում ևսք հանդիպում (ցողինանձնեա, օդինառից եւն...), այլ սովորական, ինչպէս այդ յատուկ է մեր լեզուի բոռակազմութեան օրէնքներին:

Նորեկից շատ հասաւածներ կարելի է մէջքերել, որոնք լիզուն և հարուստ բառերով, ինչպէս նաև ածանցներով (յատկապէս շատ ժիտական) բարդուած բառերով: Այստեղ նրանք Նորեկացու լիզուին մի առանձին հմայք են տալիս: Նոմանուանդ երբ կուտակում են հարկը պահանջած տեղերում, իրեւ ածական մի գոյականի հետ գործածուելով՝ միասին կազմում են մի գեղեցիկ փոխարեւութիւն, օրինակ՝

Մոլորազիր վարժութիւն,  
Հանապահասխալ տեսութիւն,  
Ակնայրաց պշրութիւն,  
Պոռեկալիեր կերպարան,  
Ախտաբարք նիւր,  
Դժնեանեսիլ զոյն,  
Ցողնափառ զիլ,  
Ցողնամել ծուխ...

(Բան ԽԸ., Դ.)

Նորեկացու այս օրինակը նոյն ժամանակ ցայց է տալիս Նորեկի լիզուի երկրորդ կարեւոր արժանիքը՝ նրա վաերանգաւորութիւնը: Այս դէպքում Նորեկացին լիզուի երանգաւորման, գունագործման համար բալորովին չէ դիմում տար կամ մոռացուած բառերի գործութեանը:

Նորեկացին իրեւ աշխարհականացման ժամանակաշրջանի բանաստեղծ, ժամանակի ոգին հրաշալիօրէն արտացոլում է իր սեկցագործութեան լիզուի մէջ: Գատկերաւորման համար ճիշդ իրականաւթիւնն է Նորեկացու պատիմիկական արտեստի հիմքերի հիմքը: Երբ բանաստեղծ պոկենում որէէ տեղ բավանդակութեան ու արտայատան միջոցների կուտակումներ է սակեդում իր ապաւորութիւնը ուժեւ:

զանցելու նպատակով, նու ոռվորաբար չի բաւականանում միայն կուտակմամբ, այլ նա այդ կուտակման բաղկացուցիչ մասերի առարկայական արտաքինը զիեցնում է կոնկրետ իրականութեան միանգամայն առրներ կողմէնքից: Ուրեմն, մի տեղ, արտայայտելու համար այն միտքը, որ ինքը առանց ըրարեգործի գերագոյն կամքի չի կարող անել կամ լինել այն ինչ պէտք է, կատարում է հետեւել համեմատութիւնները.

Զի ոչ երեխ հարք ընթանոյ երիվար առանց սանձիալի, եւ ոչ նաև նամբանայ հանդիպ առանց ուրվիշ, եւ ոչ արօ կերաինց զորք առանց մանկալի, եւ ոչ երկուունակ լծոցն ի նու հեմեսցին առանց եղողի, ոչ ամի վերաշու առանց հոդոյի, ոչ աստեղ ցնդին եւ կամ զումարին առանց ժամանակի, ոչ արեգակն փոխարեւեալ երջանակի առ ամեց աւրարական օդոյ ...

(Բան ԽՊ., Բ.)

#### Թարգմանութիւնը. —

Խնջիկս որ առանց սանձիալի ծին անխոսոր, անցոյք չի զնա երեխ, եւ աննաւալիս նաև ալիքներով չի սուրա առաջ, ինչպէս արօրը առանց մանկալի ների չի կատարի հաւասարապէս, ամորի զոյզերը առանց հօսարի չեն ընթացակցի հաւե ու հոմանայլ, ինչպէս ամպերը չեն յուում բնաւ առանց հողմերի, եւ անձամանակ չեն ցընդում աստղերն ու չեն զումարում, արեգակն առանց օդի աւարենին երջանապօյեն իր չի բոլորում ...

Այսաեղ բանաստեղծ Նարեկացու ամէն մէկ տուզը մի տարրեր գործողութիւն ու շարժման տեսարան է որ կը ներկայացնէ: Երիշար և առանձկալ, նաև և զեկուկալ, արօր և մաճկալ, եպնար և հօսար, ամպ, հոդմ, ատաղեր և ժամանակ, արեգակ և տարրերից բաղկացած օդ, այս բոլորը առանձին առանձին գերցրած, տարրեր աշխարհներ ներկայացնող բառերը, բանաստեղծի ուրբոյն ստեղծագործական կամքով ի մի խմբութելով միանոյն առիթավ, եղուն դարձնում են ծիածանափայլ:

Նարեկացու բիրած օրինակը նոյն ժա-

մանակ ցոյց է տալիս Նարեկի լիզուի մի ուրիշ կարեւոր արժանիքը: Այդ նրա առացուածքներով հարուստ լինելն է: Առաստարակ Նարեկացին միշտ գրում է ու ճաւարուած, նրա խոների և զգացմունքների լիզուական արտայայտութեան ոճաւորման հիմնական տարրը հանգիսանուում են գլխաւորաբար ասցուուածքները, թիւարու խօսքերը: Վերևում բերուած ու յիշուածի ամէն մի տողը միախամնակ մի կեղծիկի, ամրողջական իմաստ արտայացող ասացուուածք է, նոյնիսկ ժողովը բական սպիով յօրինուած:

Եթէ Նարեկը ծայրէ ծայր կարգանք, կը տեսնենք թէ տասցուածքի արժէք ու նեցող արտայայտութիւններով լիցուն են նրա էջերը: Այսաեղ կը ներկայացնենք մի քանիսը: «Կարիք անթուելիք և պատճարք ամենագրաւուք», ըրնակութիւնք կաւեղչն և անձրեք ուժգնակիք, «Ճանհմի ի բոյնն աղաւնի և անդուստ ագուա երանեմ», ահիմնարկանմ և ոչ զիխաւորիմ», «զայրս խրատեմ և ես ինքս անփորձ հմ», ուշ կինսցն փափաքանօք, այլ կինարարին իշշատական միշտ ճենճերիմ»: Առաստարակ տասցուածքները Նարեկում նոյնպէս խմբում են և առանձին ամրողջական հաւասածներ կազմում, բանասեղծի բըւեալ խոնը կամ զգացմունքը բարգակողմանիօրէն բացայայտելու համար:

Նարեկի լիզուի գեղեցկութիւնները անշուշտ չեն սպառում նշուած երեք կողմերով: Երբեք գեղարուեստական մի լիզու, այն ունի բաղմաթիւ այլ արժանիքներ, սրոնց թւում շատ կարեւոր է և պէտք է յիշասակել բարերի շարադասութեան չախսուած ճկունութիւնը:

Համաշխարհային գրականութեան մէջ Նարեկացին մարդկայսորէն դրականի ու կատարեալի մհծագոյն երգիչներից է, մի բան որ ընկած է մեր արդիական գրականութեան նշանաւոր գէմքերի՝ Նարեկացու նկատմամբ անհնացած հիմացմունքի հիմքում: «Մատենա Ծղբերգութեան» պունի զեղարուեստական անընդգրկելի մհծութեան ու մենացոյաւուն ապացոյցներից է մեր արդի գրականութեան գրայ թողած մեծ ազդեցութիւնը: Նրանից սովորել և ներշնչուել են ոչ միայն միջնադարի, այլև նոր ժա-

ժանակների հայ պողովիայի խոշորագոյն դէմքերը՝ թուռմանեանը և խոհակեանը, Սիամանթօն, Վարուժանը և Մհծարենցը, Տէրեանը և Զարենցը:

Դրիգոր Նարեկացին սրպէս երաժիշտ զարդացման վիթխարի մզում է առաջ բերել, նոր շունչ ու նոր կեանք հաղորդել հայոց միջնադարեան մասնագիտացուած երգարուեստին յատկապէս իր տառզերով, որոնց երաժշտական բազադրիչներում առաւել վճռականութիւնամբ ու շատ տաղոնդաւոր կերպով յաղթահարուած են շարականների հին, ութ-ձայնի դրութիւնը, կապուած եղանակների կազմութեան, տուեալ պոտաժը ջանի համար արդէն քարացած ձեւերը: Ըսդհանրապէս նուխտեսուած չլինելով պարտագիր նպատակների համար, տաղերը ուղար են մեացել եկեղեցական կանոնական մտածողութիւնից և աւելի շատ անկաշկանդ կերպով (քան, օրինակ, շարականները), հարստացել ժողովրդա-գուսանական աշխարհիկ արուեստից եկող կենսունուկ տարբերով: Տաղերը սրպէս զարդոլորուն երգի տեսակներից մէկը, անցել են զարգացման աւելի քան հազարամեայ ուղի, օրի վրայ դրանց յատկանիշների բիւրեղացման վըճռական նշանակութիւն ունեցող աստիճանը պարզ նշմարելի է մ. դարում, և առաջին հերթին, Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւններում: Վերջիններիս, սրպէս երաժշտա-բանաստեղծական ամ-

բողջական իրողութիւնների, վերականգնման համար ժամանակին շատ մեծ աշխատանք է տարել մեր անմտհանուն կոմիտասը, և տուել գրանցից չորսի մնածարժէք ընթերցումները: Դրանցից են ոգեշունչ-հռեստորական ժես ձայն զարիծունա և քնարական զիղումներով պատմողական աՄայլն այն իշանէրց տողերը:

Դրիգոր Նարեկացու ստեղծագործութիւնը անման է, նրա ըԱմատեան Ալքերոգութեան պունիք մարդկային սահղծագործական հնարաւորութեան մեծագոյն արտայատութիւններից մէկն է:

\* \*

Սոյն աշխատութեան պատրաստութեան տաեն աչքի տառաջ ենք ունեցել հետեւել հրաւարակութիւնները: —

1) «Թիրք Ալյօրից, Մըրոյն Եթիզորի Նաւեկացու աւաենալ, Կ. Պոլիս, 1700,

2) «Նաւեկ Ալյօրից», աշխատասիրութեանը Տեսոն Հ. Գաբրիէլի Աւետիքիան, Ս. Ղազար, 1827:

3) «Մըրոյ Նօրն մերոյ Գրիզորի Նաւեկայ Վալից Վանականի Մատենագրաւրիւնք», Վենետիկ, 1840:

4) «Նաւեկ Ալյօրամատեան Ս. Գրիզոր Նաւեկացու», արդի Հայերէնի կերածեց Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան, Գանիքէ, 1926:

5) «Գրիզոր Նաւեկացի, Տաղեր», Երևան, 1957:

ԱՌԻՔԻՆ ՎՐԴ. ՑՈՎԱԿԻՄԵԱՆ

(Վերջ՝ 2)

